**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

«*ՀՊ-ԷԱՃԱՊՁԲ-05/24*» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «19» հունվարի 2024թ., ժամը 15:00

Մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Վարդանյան Գևորգ | -Արարողակարգի և փաստաթղթաշրջանառության վարչության պետ | հանձնաժողովի նախագահ |
| Զոհրաբյան Գոհար | -Ֆինանսատնտեսական վարչության ֆինանսական բաժնի պետ | |
| Պետոյան Ռուզան | -Անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ | |
| Բեդիրյան Ծովինար | -Ֆինանսատնտեսական վարչության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ | |

Հանձնաժողովի քարտուղար Աննա Անանյան

## 1. Տվյալներ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

1.1 Մասնակիցների կողմից հայտերով ներկայացված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունները կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

1.2 Գնահատող հանձնաժողովն ուսումնասրելով մասնակիցների կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը և SS մասնագետի մասնագիտական եզրակացությունը՝ արձանագրեց, որ

ա/ 1-ին չափաբաժնի մասով ՔՈՄՓ ՊՐՈ ՍՊԸ-ի կողմից նեկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին : Մասնավորապես ՝ Acer TMP216-51 մոդելի համակարգչի տեխնիկական բնութագիրը հետևյալն է՝ Էկրանը (Monitor) 16” (հրավերով սահմանված է 15.6”), FHD 1920 x 1080, IPS, anti-glare, 250 nits, Bluetooth® 5.1 wireless card (հրավերով սահմանված է Bluetooth® 5.3 wireless card):

բ/ 2-րդ չափաբաժնի մասով ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին :

**Հանձնաժողովը որոշեց՝**

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.2 կետը և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը հանձնաժողովի նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և հայտերի գնահատման նիստ հրավիրել 23/01/2024թ-ի ժամը 12:00-ին:

**Հանձնաժողովի քարտուղարին՝**

Ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով Էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.**

**Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:**

| | | |
|---|---|---|
| Վարդանյան Գևորգ | _____ | հանձնաժողովի նախագահ |
| Զոհրաբյան Գոհար | _____ | |
| Պետոյան Ռուզան | _____ | |
| Բեդիրյան Ծովինար | _____ | |

Հանձնաժողովի քարտուղար _____ Աննա Անանյան